ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշսֆի 1

№ 3785-Ա « 15 » սեպտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՓԱՐԻԶ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա.Հարությունյանի գրությունը՝ 2027թ. Հայաստանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի 10-րդ մարզամշակութային խաղերի նախապատրաստական աշխատանքների շրջանակում 2024թ. Փարիզում կայացած Օլիմպիական և Պարալիմպիկ խաղերի կազմակերպման ֆրանսիական փորձն ուսումնասիրելու և համապատասխան քննարկումներ ունենալու նպատակով.

1.Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանին՝ 2025 թվականի սեպտեմբերի 23-ից 26-ը գործուղել Ֆրանսիայի Հանրապետության մայրաքաղաք Փարիզ:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման ծախսերի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի համաձայն:

3.Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանի բացակայության ընթացքում քաղաքապետի առաջին տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանին:

4.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ